



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«10» 08 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 66

Ձեռնարկողը՝

Քաղաքացի Երանյակ Ծառուկյան

Ք. Երևան, Արաբկիր 39փ. 24 փ.

Գործունեությունը՝

**Առինջ համայնքի 14-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 5
հողամասում ավտոմեքենաների վաճառքի սրահի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Կոփայքի մարզի

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈՒՄԻ
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 66

<10> 08 2018թ.

**Կոտայքի մարզի Առինջ համայնքի 14-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 5
հողամասում ավտոմեքենաների վաճառքի սրահի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	Քաղաքացի Ե. Ծառուկյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Առինջ համայնք

Քաղաքացի Ե. Ծառուկյանի կողմից ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Առինջ, 14-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հողամասում նախատեսվող ավտոմեքենաների վաճառքի սրահի կառուցման նախնական գնահատման հայտը՝ պահանջվող փաստաթղթերով, ներկայացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել Առինջ համայնքի ղեկավարի կողմից տրված՝ 03.04.2018թ թիվ 19 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ և թիվ 21032018-07-0070 սեփականության իրավունքի գրանցման վկայականը: Վկայականով ամրագրված հողամասը զբաղեցնում է 0,1687 հա մակերես, ունի հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն: Գործունեության ենթակա տարածքն արդեն իսկ կառուցապատված է: Հողամասում առկա են ինքնակամ շինություններ, այդ թվում՝ ավտոտեխսպասարկման կետ, հենապատ և պարիսպ, որոնք ենթակա են քանդման: Համաձայն նախագծի նախատեսվում է իրականացնել 100% կառուցապատում:

Նախագծված ավտոմեքենաների վաճառքի սրահը կիսանկուղային հարկով միահարկ շինություն է՝ 5.0մ կիսանկուղի բարձրությամբ, 8.0 մ հարկի բարձրությամբ, հատակագծում ունի 91.6x18.0մ չափեր: Շենքի արտաքին չափերով մակերեսների հանրագումարն ըստ հարկերի կազմում է 3480.0 ք.մ: Շենքի կոնստրուկտիվ սխեման իրենից ներկայացնում է տարածական ե/բ հավաքովի կարկաս: Հիմքերը նախատեսված են խամքարբետոնե նախապատրաստական շերտի վրա տեղադրված հավաքովի



երկաթբետոնյա լուծմամբ: Շենքի ճակատները պարզ են, նախատեսված տրավերտինե երեսպատումով, ապակե ցուցափեղկերով, իսկ գետնախարսխային հարկում՝ բազալտե երեսպատումով: Տանիքները միաթեք են, նախատեսված ցինկապատ պրոֆիլացված մետաղյա թիթեղից և կազմակերպված ջրահեռացմամբ: Այուները հավաքովի ե/բետոնից են՝ 500 x 500 մմ և 500 x 700 մմ կտրվածքով: Ծածկերը՝ հավաքովի կլորանցքավոր սալերով են: Պատերը արտաքին կարկասների մեջ պատող կոնստրուկցիա է դառնում 40 սմ հաստությամբ կանոնավոր ձևի տուֆ քարի շարվածքով: Կառուցապատման տեղամասը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում:

Ավտոմեքենաների վաճառքի սրահի կառուցման շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 24 ամսվա ընթացքում: Շինարարական աշխատանքները ներառում են՝ տարածքի նախապատրաստական և հողային աշխատանքներ, հիմքերի փոսորակների քանդման, այրների մոնտաժման, արտաքին պատերի և միջնորմների շարման, ծալեղների կառուցման, տանիքի թիթեռապատման, ինժեներական կոմունիկացիաների կազմակերպման, տարածքի բարեկարգման և այլ աշխատանքներ: Տարածքում առկա են անօգտագործելի շինություններ, որոնք նախատեսվում է ապամոնտաժել:

Կառույցի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համայնքային գոյություն ունեցող ցանցերից՝ տեխնիկական պահանջներին համապատասխան: Կոյուղին վերակառուցվելու է և միացվում համայնքային կոյուղատարին, բանվորների սպասարկման համար շինարարության փուլում այն կգործի:

Հայտում ներկայացվել է շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ շինանյութերի, օգտագործվող բնառեսուրսների և նյութերի քանակների, ինչպես նաև շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հիման վրա վերլուծվել է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում պայմանավորված են՝ հողային աշխատանքներով, հողային զանգվածների տեղափոխման, շինությունների քանդման, փորման բեռնման և բետոնային աշխատանքներով, ինչպես նաև շինարարական տեխնիկայի շահագործումով: Աշխատանքների հետ կապված ազդեցությունները կարող են արտահատվել փոշու արտանետումների ձևով և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում՝ դիզելային վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը վաճառել,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,



- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը հաշվարկվել է 537.12 մ³/շին. ժամ. կամ 0.746 մ³/օր, իսկ ջրցանի համար՝ 582.12 մ³/շին. ժամ. կամ 0.75 մ³/օր:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր
- տարածքում հնարավոր հոսքերը միավորել մեկ բակային ցանցում, որտեղից կմիացվեն սելավային ջրացանցին:
- շինարարության ընթացքում անձրևներից առաջացող հոսքաջրերն ուղղել պարզարան, պարզված ջրերն օգտագործել փոշենստեցման նպատակով:

Շինարարության փուլում հողային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսվում են շինարարական նյութերը ժամանակավոր տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական տեխնիկայի համար անհրաժեշտ վառելիքն ապահովվելու է շին. հիմնարկության պահեստներից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և մաքրել ավելորդ շինարարական աղբից և թափոններից: Շինարարական թափոնները և աղբը, որոնք առաջանում են քանդման աշխատանքներից (390 մ³ ծավալով) և շինարարական աշխատանքներից՝ մնացորդային գրունտի և շինաղբի տեսքով (ընդհանուր՝ 760 մ³ ծավալով) Առինջ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված կօգտագործվեն, կամ սահմանված կարգով կտեղադրվեն համապատասխան աղբավայրում:

Ավտոսրահի շահագործման փուլում արտահոսքեր չեն առաջանա և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում: Շահագործման փուլում արտանետումներ չեն առաջանա, քանի որ ջեռուցումը և սառնամատակարարումն իրականացվելու է էլեկտրաեներգիայի միջոցով:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման և վերահսկման նպատակով հայտում առաջարկվել է բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագիր և մոնիթորինգի/մշտադիտարկման պլան:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում, Առինջ համայնքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումների ժամանակ, գործունեության իրականացումն արժանացավ հավանության: Փորձաքննության փուլում



հայտը ներկայացվել է ձեռնարկողին լրակազմման, հաշվի է առնվել նաև հանրային քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկությունները:

Ամփոփելով և վերլուծելով հայտում ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ բնապահպանական և սոցիալական վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ և կկրեն ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է՝ Առինջ համայնքի ղեկավարի կողմից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական հրապարակի տեղադրման, հողամասում առկա շինությունների քանդման արդյունքում առաջացող շինարարական աղբի և թափոնների հեռացման և տեղադրման վայրերի վերաբերյալ:

2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և բնապահպանական մոնիտորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիտորինգային դիտարկումների իրականացումը և պահպանել վերջիններս իրականացման ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզ համայնք Առինջ համայնքի 14-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 5 հողամասում ավտոմեքենաների վաճառքի սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ



Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան